ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԱԶԴԵՑԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՄԱԳՐԵՐԻ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հայտնի է, որ Շուղրի 1114 թ. ազգային-եկեղեցական ժողովը սահմանեց Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության և հաստատման նոր կարգ, ըստ որի՝ կաթողիկոսական աթոռը մնում էր նորաստեղծ հայկական ինքնիշխան տերությունում, օտար տիրապետության տակ գտնվող մայր հայրենիքից հեռու, բայց յուրաքանչյուր կաթողիկոսի ընտրություն պետք է վավերացնեին բուն Հայաստանի չորս եպիսկոպոսական թեմերը՝ Բջնի, Հաղբատ, Տաթև և Արտազ[1]:

Սա նշանակում էր, որ XII դ. սկզբին Հայաստանում առավել հռչակված ու ազդեցիկ էին այդ չորս աթոռները: Տարակուսելի չպետք է լինի այն հանգամանքը, որ այդ հզոր թեմերի շարքում բացակայում է երբեմնի կաթողիկոսանիստ Անիի արքեպիսկոպոսությունը: Ըստ Կ. Մաթևոսյանի՝ «Անիի և Շիրակի եպիսկոպոսությունը հիմնվել է 1072 թ. Բարսեղ Ա Անեցու ձեռնադրությամբ և հարատևել է մինչև ԺԵ դարի սկզբները»[2]: Դեռ ավելին, ըստ Մ. Օրմանյանի, «Անւոյ արքեպիսկոպոսները լիազոր իշխանութեամբ գլխաւորութիւնը կը պահէին բոլոր Հայաստանի մէջ եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ կոչմամբ եւ միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունէին Հռոմկլայի աթոռի հետ»[3]: Այնքան բարձր է եղել Շիրակի արքեպիսկոպոսի դիրքը, որ նա Անիի ՈԹ (1160) թ. վիմագրում անգամ կոչվել է հայրապետ[4], ինչը, ըստ Կ. Մաթևոսյանի, նշանակում է, որ «Անիի արքեպիսկոպոսը Հյուսիսային Հայաստանի եպիսկոպոսական մյուս աթոռների նկատմամբ առաջնություն ունի»[5]: Այդ բարձր դիրքը վկայվում է նաև Հռոմկլայի 1178 թ. ապրիլի եկեղեցական ժողովի փաստաթղթի տակ Շիրակի թեմակալ Բարսեղի ստորագրության՝ երրորդը լինելու փաստով (Հայոց և Աղվա-

---

[1] Տե՛ս **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն, հ. Գ, Եր., 1984, էջ 37:

[2] **Կ. Մաթևոսյան**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 101:

[3] **Մ. արքեպիս. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, ս. 1784:

[4] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, «Անի քաղաք», կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 2 (այսուհետև՝ «Դիվան», պր. I և էջը):

[5] **Կ. Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 63:

նից կաթողիկոսներից հետո), որը Կ. Մաթևոսյանի եզրահանգմամբ՝ «ակներևորեն ցույց է տալիս Անիի արքեպիսկոպոսի գրված բացառիկ դիրքը»[6]: Բարսեղ Ապիրատյանն այն աստիճան է հզորացել, որ Անիի ՈՒԽԲ (1193) թվականի արձանագրությունում արդեն հիշատակվում է որպես «Հայոց կաթողիկոս»[7], ինչն հետևանք էր արևելյան վարդապետների և Կիլիկիայի հոգևորականության կաթոլիկամետ շրջանակի միջև տարաձայնությունների, որոնք էլ ավելի սրվեցին Ամենայն հայոց քահանայապետ Գրիգոր Ե Քարավեժի (1193-1194) ողբերգական մահից հետո, երբ եպիսկոպոսապետ դարձավ լատինամետ Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203)՝ Շուղրի 1114 թ. համազգային-եկեղեցական ժողովի սահմանած կարգի ոտնահարմամբ, այսինքն՝ առանց չորս թեմերի համաձայնության: Բարեբախտաբար, Հայոց հայրապետական աթոռի պառակտումը վերացավ Բարսեղ Բ Անեցու մահվամբ՝ XIII դ. սկզբին, որից հետո Զաքարե ամիրսպասալարն արգելեց Հայաստանում կաթողիկոս ընտրել՝ ի շահ նվիրապետության միասնականության:

Անշուշտ հարց է ծագում. եթե Անիի աթոռն այդքան ազդեցիկ ու հզոր էր, ապա ինչո՞ւ չի ընդգրկվել Շուղրի 1114 թ. ժողովի սահմանած չորս եպիսկոպոսությունների շարքում: Չներգրավվելու պատճառը պարզ է. դա Պահլավունի-Ապիրատյան կաթողիկոսների ազգակցականությունն էր Անիի արքեպիսկոպոսների հետ, որոնք նույն տոհմից ընձյուղված ճյուղի ներկայացուցիչներ էին: Չներառելով Անիի արքեպիսկոպոսությունը չորս աթոռների շարքում՝ Շուղրի ժողովը, փաստորեն, պահպանել է ընտրության անաչառության սկզբունքը:

Հայաստանի այդ չորս գերիզոր թեմերի հոգևոր իշխանության ծավալների վերաբերյալ բավարար պատկերացում կազմում ենք ոչ միայն մատենագրական տեղեկություններից, այլև վիմական սկզբնաղբյուրների շնորհիվ, որոնք ինչ-որ առումով ավելի համապարփակ, ընդգրկուն ու ամբողջական են: Կարծում ենք՝ հարկ չկա առանձնակի կանգ առնելու միջնադարյան Հայաստանի թերևս ամենահզոր թեմի՝ Սյունյաց մետրոպոլիտության սահմանների վրա, քանի որ նրա հոգևոր իրավասության շրջանակներն ակնառու են Տաթևի վանքին հարկատու բնակավայրերի ցուցակից[8]: Ըստ այդ ցանկի՝ դրանք արևելքից Սյունիքի Աղահեճք-Հաբանդ-Բաղք-Կովսական գավառներից ձգվում էին դեպի Գեղամա ծով ու Այրարատ աշխարհ՝ հյուսիս-արևելքից և արևմուտքից սահմանակցելով Բջնիի եպիսկոպոսության, իսկ հարավարևմուտքից՝ Արտազի աթոռի հետ: Հյուսիսից դրանք Գեղամա ծովից իջնում էին Երասխ գետը:

---

[6] Նույն տեղում, էջ 65-66:

[7] «Դիվան», պր. I, էջ 47:

[8] Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 509-523 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան):

Ափսոսալ կարելի է, որ վիմագրական համապատասխան նյութ չկա ս. Թադեոս առաքյալի գերեզմանի պահապան Արտազի աթոռի հոգևոր իրավասության տարածքային շրջանակների վերաբերյալ, բայց որոշակի պատկերացում նրա սահմանների մասին կազմում ենք Հ. Ա-ճեմյանի հետևյալ տեղեկությունից. «Վասպուրականի հիւսիս-արևելեան սահմաններում՝ Փոքր Մասիսի հարաւային ստորոտից սկսած մինչև Հեր և Զարևանդ (Խոյ և Սալմաստ) գաւառները և մինչև Ուրմիոյ ծովակի հիւսիսային կողմը տարածւում էր Ակէ, Արտազ կամ Արտազական գաւառը, որ յաճախ մաս է կազմել նաև Պարսկահայք նահանգին»[9]:

Արտազի աթոռի երբեմնի հզորության վկայությունը XVI դ. վերջին քառորդին, ըստ 1574 թ. ձեռագիր Ավետարանի հիշատակարանի, այնտեղ հինգ եպիսկոպոսի առկայությունն է[10]:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Շուղրի ժողովում Արտազի եպիսկոպոսության ընդգրկումը կաթողիկոսի ընտրությունը վավերացնող թեմերի շարքում գլխավորապես ուղղված էր նույն տարածաշրջանում Աղթամարի բանադրված հակաթոռ կաթողիկոսության հակակշռմանը:

Ի տարբերություն Տաթևի և Արտազի եպիսկոպոսությունների, Բջնիի թեմի սահմանների մասին տեղեկանում ենք առավելապես վիմագրի շնորհիվ:

Բջնիի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Թվին ՆՁ (1031), Շնորհիւն ԱՅ. այս հրամանք է իմ՝ ՏՆ Պետրոսի, Հայոց կաթողիկոսի եւ Սմբատա շահանշահի, որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաք զՍԲ ԱԾածինս հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակա եւ տվան վիճակ ի ՍԲ ԱԾածինս **ի Փոշէհանից**

[9] «Ս. Թադէի վանքը. տեղագրական և պատմական ակնարկ», կազմեց՝ Հ. Ա-ճէմեան, մաս 1-ին, Թեհրան, 1959, էջ 4: Դժվար է համաձայնել Լ. Խաչիկյանի այն տեսակետին՝ իբր 1247 թ.-ից առաջ, մասնավորապես «1114 թ. Արտազի աթոռ գոյություն չի ունեցել, իսկ Բջնին, XII դարում հայոց եկեղեցու նվիրապետության առումով, աննշան մի վայր է եղել» (**Լ. Խաչիկյան**, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 136, նաև՝ **Կ. Մաթևոսյան**, Հայաստանի թեմերը (Պատմություն և արդիականություն), «Էջմիածին», 1998, Բ-Գ, էջ 188): Արտազի աթոռի հիմնադիրը համարվում է Թադեոս առաքյալը (տե՛ս «Հայ եկեղեցու պատմություն», մասն Ա (սկզբից մինչև 1441 թ.), աշխ.՝ Եզնիկ եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2002, էջ 17-18): 1247-ն Արտազի աթոռի բարեշինության թվականն է. այն ավերվել էր թուրքերի և վրացիների ձեռքով և երկար ժամանակ մնացել ամայի ու անբնակ (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ. Կ. Մելիք- Օհանջանյանի, Եր., 1961, էջ 311): Իսկ ինչ վերաբերում է Բջնիի եպիսկոպոսությանը, ապա այն XII դ. Հայոց եկեղեցու նվիրապետության առումով աննշան վայր լինել չէր կարող, որովհետև դա թույլ չէին տա Պահլավունիները, որոնց ազգակիցները ոչ միայն իշխում էին բուն Պահլավունիների երբեմնի ամրոցների ու տիրույթների վրա, այլև կենտրոնական Հայաստանի ամենաբարձրադաս իշխաններն էին սելջուկյան տիրապետության շրջանում:

[10] Տե՛ս **Հ. Ռսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Բ, Վիեննա, 1942, էջ 478:

մինչեւ ի Նիգ եւ Դիւատուն… եւ Աղստեւ եւ Ծար գետ եւ տուաք գաւազան եւ սուրբ Նշան եւ Աթոռ: Արդ՝ եթէ ոք խափանել ջանայ զԱթոռս կամ յայլ տեղիս փոխել, կամ զհողն յափշտակել, կամ զաւանդ եկեղեցւոյս գողանալ՝ թէ եպիսկոպոսաց կամ յիշխանաց ով որ հակառակի, նզովեսցի յԱՅ եւ ի մէնջ, եւ ի ՅԺԸ հայրապետացն, եւ արմատակի ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ, եւ անլոյծ կապեսցի: Եւ արդ՝ այս է բնական եւ առաջին սահմանահատ վիճակ եւ Աթոռ զոր հաստատեցաք արձանագրով եւ շրջաբերականաւ զսահմանահատ վիճակի սորա, որ է **յարեւելից ի Ծար գետոտ մինչեւ գետն Ախուրիան յԱնւոյ, եւ ի հիւսիսայինս յԱղստեւ**… եւ որ հատանել ջանայ յայսմանէ ի միջոյ կամ յեզերաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զպատիժս կրեսցէ եւ ի հանդերձելումն. ամէն»[11]:

Հ. Եղիազարյանի մեկնաբանությամբ՝ «Ինչպես հետևում է այդ արձանագրությունից, Բջնիի եպիսկոպոսական թեմը ընդգրկում էր ընդարձակ գավառներ, Գեղամա ծովից մինչև Ախուրյան գետը, հյուսիսից մինչև Գուգարք նահանգի Զորոփոր կամ Կայենո գավառը, հարավից մինչև Վարաժնունիքի բուն սահմանը, որպիսի հանգամանքը վկայում է Բջնիի եպիսկոպոսական թեմի ուժն ու հեղինակությունը»[12]:

Հնագետ-վիմագրագետի պրպտմամբ՝ Բջնիի աթոռակալ եպիսկոպոսները XIV-XV դդ. ձեռագրերի հիշատակարաններում կոչվում են «արքեպիսկոպոս Բըջնոյ և Արարատեան», ինչն այդ թեմի հզորության վկայությունն է[13]: Ավելի վաղ, մասնավորապես XIII դ. վիմագրական ու մատենագրական սկզբնաղբյուրներում, Բջնիի աթոռին հիշատակվում են երկու եպիսկոպոսներ, մինչդեռ մյուսներին՝ մեկական[14]: Սա ևս խոսում է կենտրոնական Հայաստանի այդ թեմի՝ բացառիկ դիրք ունենալու մասին:

Նորավանքում Ստեփանոս Օրբելյանի 1298 թ. վիմագրում վկայվում է Փոշահանք[15]: Այն վիմագրագետ Գ. Սարգսյանի տեղորոշմամբ՝ Արած գավառն է[16], իսկ Դիվատան գտնվելու վայրն անորոշ է[17]: Քանի որ Փոշահանքը Փողահանք ձևով հիշատակվում է Օրբելյանի «Պատ-

---

[11] **Գ. Սարգսեան,** Նորավանքի նուիրատուական արձանագրութիւնները եւ մի տեղադրութեան ճշգրտման փորձ, «Նորավանք», ՀԱՍԵ Սիւնեաց թեմի հայագիտական տարեգիրք, Բ հրատ., Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 80, **Հ. Եղիազարյան**, Բջնիի վանքը և Բջնի գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1963, Թ-Ժ, էջ 44:

[12] **Հ. Եղիազարյան**, նշվ. աշխ., էջ 44:

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 45:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 46, **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 310, **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 461:

[15] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, «Վայոց ձոր», կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1967, էջ 216, **Կ. Մաթևոսյան**, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Եր., 2017, էջ 94-95:

[16] Տե՛ս **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 82:

[17] Տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Եր., 1988, էջ 119 (այսուհետև՝ «Տեղանունների բառարան», հ. 2 և էջը):

մութիւն»-ում Վայոց ձորից հետո, Ուրծից և Վեդուց առաջ[18], ուստի ենթադրաբար կարող ենք կարծել Դիվատան եղած լինելն այդ կողմերից ոչ հեռու՝ Շարուրի դաշտում՝ դեպի Նախիջևան ընկած մերձարաքսյան մի վայրում:

Ծար գետը «Տեղանունների բառարան»-ի հեղինակները տեղադրում են Նիգ գավառում՝ նշելով, որ այն «հիշատակված է Բջնիի տաճարի վիմագիր արձանագրություններից մեկում»[19]: Քասաղի վտակներից մեկը կոչվում է Ծարծած. «Հիշատակում է գերմանացի ճանապարհորդ Հ. Կոխը: Ղ. Ալիշանը հնարավոր է համարում նույնացնել Քասաղի վտակ Արուչայ գետակի հետ»[20]: Սակայն իրավացի է Հ. Եղիազարյանը, որը հասկացել է, թե Ծար գետի դեպքում խոսքը Գեղամա ծովի կողմերի մասին է: Բայց տեղին կլիներ, եթե հստակեցներ՝ Գեղամա երկրից արևելք՝ Արցախի Վայկունիք գավառի Ծար գետից մինչև Ախուրյան[21]:

Ըստ Ա. Հակոբյանի՝ Ծար գետը Տրտուի վերին հոսանքն է[22]: Ենթադրելի է, որ սահմանները Ծար գետից մինչև Նիգ և այն կողմ ձգվել են Գեղամա ծովի հյուսիսով և ոչ թե հարավով, որտեղ տարածվում էր Սյունյաց եպիսկոպոսության (մետրոպոլիտության) հոգևոր իշխանությունը[23]:

Բջնիի Արարատյան թեմին արևմուտքից Նիգ գավառով անմիջապես սահմանակցում էր Ամբերդի եպիսկոպոսությունը: Ամբերդի Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային դռան բարավորին, ներքուստ, Վահրամ Պահլավունու 1026 թ. արձանագրությունում արտացոլվում են նորաստեղծ Նիգի տան (գավառի) եպիսկոպոսական թեմի սահ-

---

[18] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 411:

[19] «Տեղանունների բառարան», հ. 2, էջ 845:

[20] Նույն տեղում:

[21] Տե՛ս **Ս. Մխիթարյան**, Մագիստրոսական սկզբնաղբյուրներն Աղվանք աշխարհի և Ծար (Քելբաջար) գավառի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, № 3, էջ 156-157:

[22] Տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, Վիեննա-Երեւան, 2009, էջ 239:

[23] Կարծում ենք՝ Ծար-Վայկունիքի արևմտյան շրջանները XI դ. առաջին կեսին պատկանել են Պահլավունիներին, և դա կատարվել է 990-ական թվականների վերջերին Գագիկ Ա Շահանշահի (990-1020) իրականացրած արցախյան պատժիչ արշավանքից հետո, երբ Հայոց արքան «բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Փառիսոսի և Խաչենի կողմերում» (**Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Եր., 1966, էջ 63) ու վերոհիշյալ սևանամերձ տարածքները շնորհել անշուշտ ռազմական մեծ դերակատարություն ունեցած հեծելազորի սպարապետ Վասակ Հոլում Բջնեցուն: Պ. Հակոբյանի պրպտմամբ՝ ավելի ուշ, մասնավորապես XVIII դ. կեսին, Բջնիի արքեպիսկոպոսությունն իր ազդեցությունն է տարածել նաև Գեղամա երկրի արևմտյան հատվածի վրա՝ ներառելով Հայրավանքն ու Շողագավանքը (տե՛ս **Պ. Հակոբյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 105): Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում նշել, որ Գեղարքունիքը երկու անգամ օտարվել է Տաթևի վանքից՝ 990-ականներից-1006 թ. և 1450-ականներից-1513 թ.՝ ենթարկվելով Մաքենյաց մենաստանին: Իսկ Գեղամա երկրի արևելյան տարածքները XVII դ. սկզբներին, երբ թույլ էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մաս են կազմել Աղվանից եկեղեցու:

մանները: Դրանք ընդգրկում էին Նիգ, Արագածոտն, Քաղաքոդաշտ (Վաղարշապատ), Ամբերդ (Արագած լեռան հարավակողմ) գավառները՝ իրենց *պտուղ* կամ *պտղին* հարկաչափով, որը ըստ Ս. Ավագյանի, նույն աթոռահարկն է և գանձվում էր մեծ մասամբ բերքի տասանորդի չափով[24]:

Նիգ գավառը IV դ. եղել է Սաղմոսավանքի վիճակը[25]: V դ. կեսին նրա մի մասը, ինչպես նաև Ամբերդի 1026 թ. վիմագրում նշված տարածքները ներառվել են Արագածոտնի նորաստեղծ Ամատունյաց եպիսկոպոսության կազմի մեջ, որի սահմանները հյուսիսից հարավ իջնում էին Քասաղ գետից Օշական, իսկ արևմուտքից արևելք ձգվում էին Էջմիածնից Եղվարդ, ինչը մակաբերվում է ժամանակին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու աջակողմյան ավանդատան պատի վրա փորագրված արձանագրությունից[26]: Առաջնորդանիստը եղել է Ամատունյաց նախարարության կենտրոն Օշականը:

Հնարավոր է՝ հետագայում Արագածոտնի առաջնորդանիստի տեղափոխությունները Հայոց իշխանի նստավայրեր՝ Արուճ (VII դ. կես)՝ Գրիգոր Մամիկոնյանի իշխանապետության օրոք, և Թալին (VII դ. վերջ)՝ Ներսեհ Կամսարական ապուհյուպատ պատրիկի իշխանության տարիներին[27]: Հետո էլ տեղափոխվել է Նիգ, որտեղ X դ. կեսին առաջին անգամ հանդես է գալիս Գնթունյաց եպիսկոպոսությունը[28]:

1026 թ. աշխարհական իշխանի կողմից, առանց կաթողիկոսական կոնդակի, եկեղեցական վարչատարածքային միավորի հիմնադրման ու Ամբերդի այդ թվականի վիմագրում կաթողիկոսի անվան բացակայության կապակցությամբ բավական ուշագրավ դիտարկում է կատարել Կ. Մաթևոսյանը, ըստ որի՝ դրանք պայմանավորված էին հայրենասեր Վահրամ Պահլավունու և բյուզանդամետ Պետրոս հայրապետի միջև լարված հարաբերություններով, որոնց հետևանքով Հայոց եկեղեցու գլխավորը մի առ ժամանակ «որոշ իմաստով մեկուսացած կացության մեջ է հայտնվել»[29]:

Ամբերդ ամրոցում եպիսկոպոսանիստը, ինչպես երևում է, մնացել

---

[24] Տե՛ս **Ս. Ավագյան**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 17-18: Ամբերդի 1026 թ. վիմագրում հիշատակված մի շարք եկեղեցական տուրքերի չափերից հնարավորություն ենք ստանում որոշակի պատկերացում կազմելու XI դ. մեր նախնիների կողմից հայրենի եկեղեցուն ու հոգևորականությանը կատարած մի քանի վճարների գների մասին: Այսպես, հողադրամ կոչված հարկն արժեցել է 30, ձեռնադրությունը՝ 40, պսակը՝ 30 դահեկան: Տալիս էին նաև կնքադրամ ու տնօրինեքի վճար: Այս թվերն ստանում ենք տեղում հոգևորականին վճարված գումարի և նրա կողմից դրանից թեմական աթոռին տրված հարկի 1:10 հարաբերակցությունից:

[25] Տե՛ս ձեռ. № 8061, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:

[26] Տե՛ս վիմագիրը՝ **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 190:

[27] Տե՛ս **Ա. Մանուչարյան**, Սաղմոսավանք, Сагмосаванк, Saghmosavank, Եր., 2015, էջ 75:

[28] Տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 93:

[29] **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., 2015, էջ 46-49:

է մինչև XIII դ. 40-ական թվականների սկզբները: 1243 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267) կոնդակով, որի քարեղեն տարբերակը վավերացված է Հովհաննավանքի գլխավոր եկեղեցում, Այրարատի այդ հռչակավոր վանքին շնորհվում է «սեփական վիճակ սբ. Կարապետիս յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչեւ յԱշնակ: Եւ սպասաորք սորա Մկրտիչ եպիսկոպոս եւ եղբարքս խոստացան կատարել զիշատակ մեր յետ ելից մեր…»[30]: Հետաքրքրական է, որ Սսի 1243 թ. Բ ժողովի կանոններին 1246-ին հավանություն տված արևելյան բարձրաստիճան հոգևորականների շարքում Կիրակոս Գանձակեցին հիշատակում է «և եպիսկոպոսն Անբերդոյ Մկրտիչն»[31]: Եթե երկու Մկրտիչ եպիսկոպոսները նույն անձնավորությունն են, ապա ստացվում է, որ Արագածոտնի աթոռանիստն արդեն 1243 թ. Արագածի անառիկ ամրոցից տեղափոխված է եղել միջազգային տարանցիկ բանուկ ճանապարհի մոտ գտնվող ու ժամանակի Հայոց գլխավոր մենաստաններից մեկը համարվող Հովհաննավանք, բայց թեմակալը շարունակել է կոչվել «եպիսկոպոս Անբերդոյ»: Հովհաննավանքի եպիսկոպոսությունն իր հզորության գագաթնակետին է հասել XIV դ. սկզբներին, երբ նրա հոգևոր իրավասությունը, Նիգի կեսից, Ամբերդից, Արագածոտնից բացի, տարածվել է նաև Շիրակի վրա, ինչը հուշում է ժամանակին եղած, հետո անհետացած մի խաչքարի հետևյալ արձանագրությունը. «ԶՎասիլ հայր Յովհաննու վանից՝ առաջնորդ Շիրակայ և ամենայն Անբերդու՝ յիշեցէք ի Քրիստոս: Թուին ՉԿ (1311)»[32]:

Իսկ Նիգ գավառի մյուս կեսը, ենթադրելի է, որ XIII դ. պատկանել է Բջնիի Արարատյան գերիզոր թեմին:

Ինչ վերաբերում է Հաղբատի աթոռին, ապա հարկ է նշել, որ հյուսիսային Հայաստանի եպիսկոպոսական կենտրոնը նախ հաստատվել է Սանահնի վանքում: Այդ մենաստանի՝ մեզ հասած «Քոթուկ»-ի մեջ ներառված Սմբատ Բ Բագրատունու (977-990) 979 թ. արքայական հրովարտակում, որով հաստատվում էին Սանահնի եպիսկոպոսության թեմն ու նրա վիճակները, արտացոլված էին նորաստեղծ աթոռի սահմանները. «…զամենայն երկիրն *Տաշրաց*՝ զ*Վերին* եւ զ*Ներքին*, մինչ ի լեառն *Բազում*, յայսկոյս եւ յանկոյս, մինչեւ ի սահմանս *Գուգարաց* աշխարհին եւ մինչ ի սահմանս *Տփխ[է]աց* եւ *Վրաց*, եւ ի սահմանս *Նիգ* գաւառի եւ մինչեւ ի սահմանս *Կայենոյ*, եւ զսահմանս *Ծաղկոցաց*, մինչ ի սահմանս *Տան՝ Շիրակայ*»[33]:

Կ. Ղաֆադարյանի հավաստմամբ՝ այդ հրովարտակն ըստ «Քոթուկ»-ի՝ փորագրված է եղել նաև քարի վրա, որը մեզ չի հասել. «Գրէ

---

[30] **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 95:

[31] **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 310: Տե՛ս նաև՝ **Կ. Մաթևոսյան**, Հայաստանի թեմերը (Պատմություն և արդիականություն), էջ 18:

[32] «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 30:

[33] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քեօթուկը)», աշխ.՝ Պ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 67:

կոնդակ և արձան յաւիտենական թագաւորական հրամանաւ»[34]:

Փաստորեն, «Սանահնի վանքը դարձել է նորակազմ Կյուրիկյան թագավորության եպիսկոպոսական աթոռանիստը (մինչև XI դ. կեսը)»[35]:

1064 թ. Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկե Ա Բագրատունին (1048-1089) եպիսկոպոսական աթոռը Սանահնից տեղափոխել է Հաղբատ[36], որտեղ էլ, ինչպես հայտնի է, 1081 թ. նրա գլխավորությամբ տեղի ունեցավ նշանավոր եկեղեցական ժողովը, որի ժամանակ Անի-Շիրակի եպիսկոպոս Բարսեղ Պահլավունի-Ապիրատյանը ձեռամբ Աղվանից Ստեփանոս Ա հայրապետի օծվեց բուն Հայաստանի կաթողիկոս (մինչև 1105 թիվը, որից հետո դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս՝ Բարսեղ Ա Անեցի՝ 1105-1113 թթ.):

Հաղբատի եպիսկոպոսական աթոռի հոգևոր լիազորության սահմանները, անշուշտ, ընդգրկում էին Սանահնի արքայական հրովարտակի մեջ ընդգծված տարածքները:

Թշնամու պարբերաբար կրկնվող հարձակումների պատճառով Տաշիր-Զորագետի թագավորության անկումից և նրա տարածքները սելջուկների գրավելուց հետո (≈1110-1113), ինչպես երևում է, խաթարվել է Հաղբատի եպիսկոպոսական վիճակը[37]:

Հաղբատի Ս. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրայի (ցավոք, անձրևաջրերից զգալիորեն քայքայված) արձանագրության ընթեռնելի հատվածներից պարզվում է, որ Վրաց Դավիթ Շինարար թագավորը (1089-1125) վերահաստատել է վանքի եպիսկոպոսական թեմը, եկեղեցիներն ու միաբաններին ազատել պետական հարկերից, որոշել նրա ու Սանահնի վանքապատկան տիրույթների սահմանները[38]: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ «Արձանագրությունը գրված է 1110 թվականին կամ քիչ հետո, երբ Դավիթ Շինողը թուրքերից խլեց Սամշուլդեն և Հաղբատը»[39]:

Նույն՝ Ս. Նշան եկեղեցու վերոնշյալ արևմտյան մուտքի կամարի (միջնամասում նույնպես քայքայված) արձանագրությունից իմանում ենք, որ Հաղբատի առաջնորդ Բարսեղը 1180 թ. «հանդերձ վարդա-

---

[34] **Կ. Ղաֆադարյան**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 191:

[35] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 886:

[36] Տե՛ս նույն տեղը, էջ 527:

[37] 1113 թ. Աղթամարի Դավիթ եպիսկոպոսը հակաթոռ կաթողիկոս հռչակվելով՝ իր անօրինական ձեռնադրությունը հավանության արժանացնելու համար դիմել է Հայաստանի մի շարք աթոռների (Անի, Տաթև, Արտազ), որոնց թվում Հաղբատի անունը կարծես չի հոլովվում:

[38] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ IX, «Լոռու մարզ», կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Եր., 2012, էջ 130-131 (այսուհետև՝ «Դիվան», պր. IX և էջը):

[39] **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ. Ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ 144:

պետ⌈աք⌉» կազմել է շրջաբերական՝ վանքի վիճակի վերստին հաստատման մասին, ինչը վավերացրել է Վրաց Գեորգի Գ թագավորը (1156-1184): Հինգ տարի անց Հաղբատավանքի առաջնորդ Տեր Բարսեղը Մածնաբերդի տիրակալ Կյուրիկե Բ Բագրատունի արքայի (1145-1170) դուստր Մարիամի գեղագիր արձանագրությունում՝ արտաքուստ փորագրված ժամատան կամ Մեծ գավթի հյուսիսային պատի կիսաբոլոր պատուհանների կամարներին, հիշատակվում է որպես «արքեպիսկոպոս»[40], ինչը նրա գլխավորած աթոռի հզորության, հեղինակության ու հռչակի վիմագրական արտացոլումն է: Հաղբատավանքը դասվում է Հայաստանի երկարատև գործած վանքերի շարքին:

Այսպիսով, առկա վիմագրական նյութը, մատենագրական տվյալների համադրմամբ, հնարավորություն է ընձեռում որոշակի պատկերացում կազմելու Հայաստանի միջնադարյան մի շարք ազդեցիկ եպիսկոպոսական թեմերի հոգևոր իրավասության սահմանների մասին X-XIII դդ.:

Բանալի բառեր – *միջնադարյան, եպիսկոպոսական աթոռ, արձանագրություն, Հայաստան, հիշատակություն, ճշգրտում, տեղադրություն, Արցախ*

АШОТ МАНУЧАРЯН – ***Границы влиятельных епископских престолов в средневековой Армении согласно лапидарным надписям.*** – Лапидарные надписи дают определённое представление о границах ряда влиятельных епископских кафедр, например, Амберда, Бджни, Ованнаванка, Санаина, Ахпата в X–XIII вв. В этих надписях иногда встречаются сведения, которые нуждаются в уточнении. В частности, в статье уточнено местоположение реки Цар, упомянутой в Бджнийской надписи 1031 г. Речь идёт о реке, находящейся в западной части Арцаха.

Ключевые слова: *средневековый, епископский престол, надпись, Армения, упоминание, уточнение, местоположение, Арцах*

ASHOT MANUCHARYAN – ***The Reflexion of the Borders of Some Armenian Medieval Influental Episcopal Sees According to Inscriptions***. – Due to inscriptions, we are able to get some idea about the borders of some Armenian medieval influential Episcopal Sees in X-XIII cc., such as Amberd, Bjni, Hovhannavank, Sanahin, Haghbat.

We sometimes come across references in those inscriptions that need clarifications. In particular, we mean the location of the river Tsar due to the Bjni inscription that dates back to 1031. Due to it, we clarified the fact that it is the same river that flows through the eastern part of Artsakh.

Key words: *medieval, episcopal See, inscription, Armenia, clarification, definition of the location, Artsakh*

Ներկայացվել է՝ 15.01.2018, գրախոսվել է՝ 04.02.2019, ընդունվել է տպագրության՝ 21.02.2019

---

[40] Տե՛ս «Դիվան», պր. IX, էջ 144: Լ. Մելիքսեթ-Բեկը Բարսեղին համարում է «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գլխավորներից մեկը (տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, վրացերենից թարգմանեց Հ. Բայրամյանը, Ս. Էջմիածին, 2016, էջ 182-184):